



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հում օգուտի մի մասը յատկացրած է Եւպատորիայի
հայոց եկ. ծխ. գպ. սրբ տշտկերաներին

Գ Է Պ Ի
Ս Ի Բ Ի Ր Ի Ա

ՅԱՐԻՅԻՆԻՅ ՄԻՆՉԵՒ ԻՐԿՈՒՏՍԿ

Ա Յ Յ

Աղեփանդեան կենդրոնական օստանակիր
բանդի հայ բանդարկեալներին.

(Արտատպած Արարատ տմազրից)

Գ ր ե ց

ԵՐԵՄԻԱ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Ց

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐՔՈՅ ԷՋՄԱՆՆԻ

1907

Համապարամախնով գինն է ամեն սեղ 10 կոպ.
50—100-ին. 20% զեղջ

910.4(47)

U-88

10 NOV 2017

310.4(47)

U-88

Ջուտ օգուտի մի մասը յատկացրած է Եւպատօրիայի հայոց եկ. ծխ. դպ. սրբ աշակերտներին

Դ Է Պ Ի Ս Ի Բ Ի Ր Ի Ա.

ՑԱՐԻՑԻՆՆՅ ՄԻՆՁԵԻ ԻՐԿՈՒՏՍԿ

Ա Յ Յ

Աղեփանդեան կենդրոնական սածանակի բանդի հայ բանդարկեալներին.

(Արտատպած Արարատ ամառըից)

Դ ր Ե ց

ԵՐԵՄԻԱ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆՅ

ԱՍՏՎԱՍԻ Է
1904 թ.
ՎԱՂԱՐՇԱՎԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՍՐ ԱԹՈՌՈՑ ՄՐԲՈՑ ԷՃՄԻԱՆՆԻ

1907

32 02

355 2604 3900
ձանապարաժախնով գիճն է ամեն սեղ 10 կոպ. 1/62
50—100-ին. 20% գեղջ

Ո Ր Բ Ա Խ Ն Ա Մ

ԵՂԲԱՅՐՔԻ ԽՆՁՈՐԵԱՆՆԵՐԻ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂՆԵՐԻ

ԲՕԵԱՐԱՅԻ ԵՒ ԱՐԴԵՄԻԱՅԻ

Յիսասակին

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Ե Վ Ս.

0 6 AUG 2013

22063

ՅԱՐԻՑԻՆԻՑ ՄԻՆՁԵՒ ԻՐԿՈՒՏՍԿ

Ա Յ Ց

Աղեփանդեան կենդրոնական սաժանակի
բանդի հայ բանսարկեալներին.

190. Թւի սեպտեմբերի 24-ի գիշերը մի չարաքաստիկ պատկեր էր ներկայացնում այրիացած երիտասարդ հոգևորականի կողիկ, աղօտ լուսաւորուած, բարձր առաստաղներով ու պաղ պատերով բնակարանի սենեակներից մէկում—ննջարանում, ուր դրած էին երկու մահճակալներ 8 տարեկան որդու և հօր համար. թէև նոքա միշտ էլ միասին էին քնում: Գիշերուայ ժամը երկուսին կամ երեքին քահանային ստիպել էր վերկենալ իր հոգևոր մերձաւոր իշխանութեան խիստ հրամանը. «չուտափոյթ մեկնել դէպի Իրկուտսկ», որից ոչ հեռու եօթանասուն վերստի վերայ գտնուում է Աղէքսանդրեան կենդրոնական տաժանակիներին բանտը. «հաղորդելու 16 բանտարկեալներին»:

Յիրաւի քաղցր է մի այդպիսի ճանա-



236-93

պարհորդութիւն ու պարտականութիւն յանձն առնել բարեյակող հանդամանքներում, բայց ... ծանր յուզմունքներից յետոյ, անցեալ քաղցր օրերի հակադրութիւնը, սիրելիների կորուստը, խառն ու տխուր յիշողութիւններ ու մտածմունքներ մոլորեցրել էին նորան և հոգու ներքին անհանգստութիւնից ման էր գալիս սենեակների մէջ ինքն էլ չիմանալով, թէ քայլերը դէպի որ ճանապարհը ուղղէ. երկաթուղու կայարան, թէ նաւահանգիստ: Այս մասին էր խօսում նա իր ուն ծեր ժամակոչի ու նրա պառաւ բարի կնոջ հետ, որոնք իրանց բարի խորհուրդներով կարծես կամենում էին երիտասարդ, բայց վաղ թառամած քահանային տանջող ու ճնշող հոգեկան տանջանքները փարատել. նոյն իսկ՝ երբեմն-երբեմն յուսադրում, թէ «չը պէտք է անհանգիստ լինիք, փառք Արարչին, այս առաջի անգամը չէ, որ տանն ենք մնում Վարդգէսի (8 տ. որդին) հետ»: Բայց իսկոյն սթափուում էին, աչքի առաջ ունենալով, որ ճանապարհը շատ երկար է. Յարիցիների մինչև Իրկուտակ 6000 վ. երկաթուղով՝ 10 —11 օրուայ (գիշեր և ցերեկ) ճանապարհ. Այդ գիշեր սովորականից շատ շուտ

մտանք անկողին. Վարդգէսին պատմեցի մի քանի կրցկտուր բաներ, որից յետոյ իրար փոխադարձ համբուրուելով՝ «գիշեր բարի» ասինք ու քուն մտանք: Արդէն նոր էի արթնացել ու վերկացել անկողնից, մի կերպ հագնուել, առանց լուացուելու մտեցայ մահճակալին: Արտասուքները ակամայ այտերիցս գլորուում էին: Նա դարձեալ քնած է: Ո՛չ: Մօտենում եմ վերջին հայրական համբոյրս տալու, բայց փոխադարձն եմ ստանում:

—Միրօն, դեռ վաղ է այնպէս չէ:

Լաւ չէր լինիլ, որ իմանայիր, թէ Հաչտարխանից շագենաւ գալու է թէ ոչ, ինձ ազատ զգալով այս ու այն կողմն եմ շրջում. մի արկղ փակում, միւսում բանալիքը պահում, երրորդը չը գիտեմ ինչ անել. ո՞վ գիտէ վերադառնամ, թէ ոչ. ահա մաշող մտքեր, որոնք այսպիսի լուպէներում կարծես մեխուում են մտքի մէջ և բաց չեն թողնում: Լամպի աղօտ լոյսը, որ դրուած էր գզրոցի վերայ ննջարանում, հազիւ թէ լուսաւորում էր իր թոյլ ճառագայթներով Վարդգէսի սպիտակ դէմքը: Խեղճ սըղայ. իմ վերկենալուց յետոյ, նա էլ է արթնացել. բայց ձեւացնում է մանկական անմեղու-

Թեամբ, թէ քնած էս Արդեօք չի մտածում,
 թէ ինքը մայր չունի, իր վրայ դողացողը,
 հոգս տանողը, աղօթողը ու խաչակնքողը
 յաւիտեան չի վերադառնալու: Չի մտածում,
 որ տաս տարեկան քրոջից՝ աննման Անա-
 հտից և փոքրիկ Մկրտչից բաժանուած է.
 էլ իրար հետ չեն խաղալու, գղզգուելու,
 պարելու, իրար ծեծելու: Այժմ էլ ժա-
 մանակով, գուցէ և ընդմիջտ հօրից է բա-
 ժանուում: Այո՛, նա քնած չէ. նա նոյնպէս
 տանջուում է, ինչպէս իւր հայրը, որով-
 հետև մենակ է մնալու դատարկ սենեակ-
 ների մէջ: Խորին լուսթեան մէջ յանկարծ
 լսում եմ նորա ձայնը: «Հայրիկ, դու շու-
 տով ես գնալու, ապա ես ո՞ւմ հետ քնեմ.
 բաբուշկայի—այո՛: Կինը՝ որ պահապան
 հրեշտակի նման կանգնած էր մահճակալի
 մօտ ու լսելով որբի ողորմելի խօսքերը,
 «Ո՛չինչ, մենք իրար հետ կը քնենք. վաղը
 քո մահճակալը կը տեղափոխենք միւս սե-
 նեակ», վրաբերեց բարի պառաւը:

Այսպէս թէ այնպէս հասաւ վերջապէս
 վճռական րոպէն. ժամակոյճ ներս մտնելով
 վերջնականապէս հարցը որոշեց: «Հաշտար-
 խանից մէգի պատճառով հաղիւ թէ որեիցէ
 ընկերութեան շողեմաւ գայ, իսկ եթէ ու-

չանաք, գնացքը կը թռչի»: Ժամը արդէն
 չորսն էր. ես ամենին չէի իմացել, թէ ինչ-
 պէս ժամերը սլացել էին. ամեն բան պատ-
 րաստ էր. մուշտակ, վերմակ, բարձ—մար-
 դուս անբաժան ընկերները ճանապարհոր-
 դութեան ժամանակ, Վերջին անգամ մօտե-
 ցայ Վարդգէսին. թշուճու երեխայ, յուսա-
 հատ քուն է գնացել: Մեղմ հայրական վե-
 րջին համբոյր առնելով, թաթերիս վերայ
 անհաստատ քայլերով վիզս ճըկած, դուրս
 եկայ: Այս ի՛նչ անտանելի վիճակ է, անց-
 նում էր մտքովս. ոչ ոք չկայ չորս կողմը,
 ոչ հայր, ոչ մայր, ոչ քոյր ու եղբայր, ոչ
 կին և ոչ հասակաւոր զաւակներ և ոչ էլ
 մի սրտացաւ բարեկամ, որ գոնէ մէկին
 կարողանաս յայտնել ուր գնալը, կամ
 սրտիդ մաշող պատճառները:

Իրսի տեսարանը ճիշտ ներսի պատ-
 կերն էր արտայայտում: Մառախուղ ու
 մէգ պատել էր ողջ Յարիցին բառի բուն
 նշանակութեամբ. փողոցների լապտերների
 լուսաւորութիւնը համարեա իր աղօտ ու
 փլփլուն լուսի ճառագայթներով յաղթա-
 հարուած գիշերային մթութիւնից կորցնում
 էր նշանակութիւնը: Փողոցների հոյակապ
 ու գեղեցիկ երկյարկանի, երբեմն եռա-

յարկ շինութիւններ, եկեղեցիների բարձր գմբէթներ, բոլորը, բոլորը թաղուած էին խաւարի մէջ: Ո՛հ, որչափ ճնշող և խեղճող է օդը. կարծես խաւարի հետ միացած ուզում էին իրանց թագաւորութիւնը ևս մարդկանց յիշեցնել: Հազիւ կարելի էր փողոցները ջսկել, իսկ մարդու տեսնել ու ճանաչել անհնարին էր: Թոյլ քայլերի ձայն լսելով առանց երկմտելու՝ նոյն իսկ երկիւղից հարցրի:

«Միրօն, չը գտնոր»։— Ո՛չ:

— Եթէ այդպէս է խնդրիր գիշերապահին, թող օգնէ քեզ և միասին իրերը կայարան բերէք, իսկ ես ձեզ այնտեղ կըսպասեմ: Կրիայի անհաւասար քայլերով գնում եմ դէպի կայարան, երբեմն ուշքի գալով, թէ մի գուցէ նորա անցան ու ես չը տեսայ. կամ չը լինի, թէ գնացքի ժամանակը անցնի:

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ արդէն աղօթարանը բոլոր աշխարհին խոստանում էր պարգևել իր կենդանացուցիչ լոյսը: Այն, որչափ բարերար ազդեցութիւն են թողնում առաւօտեան ճառագայթները մարդու թէ հոգու և թէ մարմնու վերայ: Արդէն արևի թոյլ ճառագայթներն էլ կա-

մաց-կամաց նոր հարսների նման՝ մէգի ու մշուշի քօղը պատռելով սկսեցին համայն արարածներին կենդանութեան ողջունով հանդիպել: Մենք արդէն մօտ 30—40 վերստ անցել ենք, միայն այժմ գլխի ընկայ, որ Միրօնի հետ ամեն բան՝ փող տալ, մնաս բարով ասել, հեռագիրը իրան թողնել, այդ ամենը կատարել եմ լռելեայն, այն, այժմ թոյլ յիշեցի, որ նա ինձ սիրտ էր տալիս:

Երկաթուղու գնացքը թէև ոչ սրնթաց, բայց դարձեալ զգալի կերպով ճանապարհ էր կտրել: Միթէ Ռազգու շնայեան անցանք հարցրի ուս ճանապարհորդին և կարծես ամօթից կարմրեցայ. չէ որ մի քանի վերստ միայն Յարիցիկից հեռու է: Մեր յետևն էին մնացել Յարիցիկի հարուստ վարերսհողեր, փոքրիկ ծանօթ բլուրներ, վըտակներ, տեղտեղ սշխարի հօտեր, որոնք արածում էին ոչ հեռու կիսաաւերակ գիւղերից, Դուրսը խոնաւ է. անձրև է մաղում, գնալով ձիւնի է փոխուում ու կամաց կամաց օրը ցրտում. և յիրաւի մի երկու օրից յետոյ զգալի կերպով օդը փոխուեց: Սաւեր, լեւներ, դաշտեր և երկրի ամեն մի անկիւն ծածկուած էր բնութեան միապազաղ սաւանով— ձիւնով, չորս կողմդ միայն

ցուրտ ու սառը առարկաներ են: Մերկացած ծառերը սգաւորների նման գլուխները ցրտի ու ձմրան առաջ խոնարհեցրած՝ ծանրաբեռնուած էին ոչ թէ քաղցր, անուշ, հիւթալի ու համեղ պտուղներով՝ այլ լոկ սպիտակ բամբակի քուլաներով— ձիւնով, որոնք մին—մին քամուց շարժուելով՝ գետինէին նստում: Չմեռը իր դաժան պատուկերով նոյնչափ տպաւորիչ է: Ոչ մի տեղ կենդանութիւն չէր տեսնիր: Ամեն շնչաւոր առարկայ ձմրան ձեռից փախել է իր պատուպարան՝ բունը մտել: մենք միայն տաք վազօնների մէջ ոչինչ չէինք զգում: Մեզ համար միևնոյն էր, թէ ամեն մի կայարանում ուս գեղջուկ կամ գեղջուհին իր մանրիկների հետ ժամերով այդ ստակալի ցրտերին սպասում է երկաթուղու գնացքին, որ ի՛նչ է ունեցածները՝ կաթ, կարագ, տապակած սագ, բագ, հաւ, եզան խաչած լեզու, խողի միս, հաց իր տեսակներով կարողանայ ծախել, որ իր հազար ու մի ցաւերից գօնէ մի քանիսը մեղմած լինի:

Այն, 20—30 աստիճան սառնամանիքի մէջ ժամերով սպասել առաւօտեան կամ կէս գիշերին կամ երեկոյեան, կրկնում ենք շատ անտանելի է, միայն ուս չարքաչ

գեղջուհին կարող է ամենայն համբերութեամբ տանել: Ո՞վ գիտէ նոյն ժամին իր տգէտ մարդը ո՞ր տաք գինետանը իրան հարբեցութեան է մատնած—դեռ լաւ, որ գնացքը իր որոշած ժամին տեղ հասնի, սա էլ հակառակի նման շատ հազուադիւր բան է հիւսիսային երկաթուղու գծի վերայ:

Գնացքը ժամերով, օրերով այս ու այն տեղում կամ կայարանում կանգնած է, որովհետեւ ճանապարհները ձիւնով լցուել է. մինչև մարդիկ չը գան, չը մաքրեն գնացք իր ճանապարհը չի շարունակիր:

Պենդայի անտառների վերջանալուց յետոյ սկսուում է Սամարի նահանգի ընդարձակ դաշտավայրերը և վերջանում է Չելիաբինսկի մօտ, որտեղից գրեթէ սկիզբն է առնում Ուրալեան լեռները, իրանց հազար ու մի տեսարաններով, բարձր ու հսկայ գագաթներով, բնութիւնից յղկացրած ահռելի ժայռերով, կուսական խիտ անտառներով:

Եթէ ձմեռային մեռելութեան մէջ այդչափ գրաւիչ ու հրապուրիչ են այս լեռներն ու անտառները, ապա ամառը կամ դարնան արևի բազմագոյն ճառագայթների տակ ո՞վ գիտէ ի՛նչ հրաշալի բնական պատ-

կերներ են ի ցոյց գալիս: Ահա մի կողմում առանձնացած, կոնուսածև մի շատ բարձր ժայռ, ծածկուած կանաչ բէրօղօլ: Միւս կողմից ձորն է ցածրանում, երրորդ կողմից լանջը դուրս ցցած հարկան ժայռին է խոնարհուում. մի խօսքով գնացքը ոլոր ու մոլոր զառիվայր ու զառիվեր ճանապարհով, երկու կողմից շըրջապատուած երկիւզալի հսկայ լեռների ու ձորերի կոյտերով անվերջ անտառների միջից թուչում է: Պիտի խոստովանուել, որ ճանապարհորդները շատ էլ խաղաղ հոգով չեն նայում ահռելի ու վիթխարի բարձրութիւններին, որոնք կարծես հէնց հիմայ փուլ պիտի դան և Աստուած մի արասցէ, բաւական է մի անհասկանողի կամ մի աներևոյթ ուժի ցնցում, որը ստիպէր այդ հսկայ ժայռերից մէկնումէկին տեղից շարժել և ահա գնացքի խորտակումը անխուսափելի է: Այդպիսի մտքերով են զբաղուած մանաւանդ նոքա, որոնք առաջի անգամ են անցնում Ուրալեան լեռները. ճշմարիտ որքան նիւթական կամ ֆիզիքական ջանքեր են գործադրուել ու քանի՜ երկար տարիներ, մինչև որ մարդկութեան առաջ բացուել է մի ազատ ճանապարհ, որ միմիայն անտառներից, ժայ-

ռերից ու ձորերից է սկիզբը առնում ու այնպէս էլ վերջանում: Գրիչ և կամ զօրեղ յիշողութիւն հազիւ թէ ընդունակ լինին ամեն մի հրաշալիքի ճշգրիտ նբութիւննը թղթի վերայ արտայայտել. միայն և՛ միայն մարդ իր սեպհական աչքերով կարող է տեսնել և ապա զգալ բնութեան այս նուրբ ներգաշնակութիւնը:

Ուրալեան լեռներից յետոյ, բառի բուն հասկացողութեամբ սկսուում են կուսական անվերջ ու անծայր խիտ անտառները: Բնութեան հետ ինչպէս յիշեցինք հազարաւոր աշխատաւոր, տոկուն ձեռներ ամիսներով կըռուել են, որով կարողացել են կըտրատելով անտառի միջից մի գիծ տանել: Օրերով ու գիշերներով վագօնների փչացած օդի մէջ անցկացնել ի՛նչ ասել կուզէ, որ շատ տաղտկալի է և միանգամայն ձանձրալի. բայց Սիբիրեան երկաթուղու գծի վերայ այդ ամենը զգալի չէ, քանի որ զանազան տեսարանների փոփոխումը իւրաքանչիւր մի քանի ժամից, մարդու հոգին կարծես թոյլ չէ տալիս ճնշուելու: Ահա Օբ և կամ Իրտիշ գետերի վերայ ձգուած լայն, երկար ու հիմնական ամուր երկաթեայ կամ չուգունէ կամուրջները, որոց վերայից գնաց-

բը շատ դանդաղ է գնում. նախ կամուրջը չըփչացնելու համար, երկրորդ միջոց տալով ամեն մի հետաքրքրուող ճանապարհորդի լաուշադրութեամբ նայելու ու զարմանալու: Այսպէս գնում ենք օրերը համարելով, թէ վերջապէս, երբ պէտք է մեր ջարդուած մարմնուն հանգիստ պարգևել, Ահա և մի փոքրիկ գետ — դա ներքին Անգարան է, Իրկուտակ մտնողի կարապետը, որը գնալով աւելի լայնացնում է դաշտը, որովհետև ակին ենք մտնում:

Ահա և իսկական Անգարան*), պարզ, ջինջ, հասարակ աչքով կարելի է տակի առարկաները ջոկել: Զուրը ամենաառողջարար, բայց շատ պաղ է, այնպէս որ մի անգամից մի բաժակ հազիւ թէ կարելի լինի խմել:


Վերջապէս հոկտեմբերի 8-ին առաւօտեան Իրկուտակի՝ հայ մարդու հիւրանոցում

*) Սկիզբն է առնում Բայկալ լճից և թափուում է կամ միանում Ենիսէյի հետ 1560 վերստ երկարութեամբ: Չնայելով սրնթացութեան ու կատաղի լինելուն նաւագնաց է: Վտակներն են Իրկուր, Կիտա, Բելոս և այլն: Սա ներքին Անգարայի մասն է: Сна Всерос. словарь толкователь. 91 стр. 1893. изд. А. А. Каспарина.-

ինձ դարթնած տեսայ: Յուրա, խոնաւ, անմաքուր սենեակը իր գարշելի օդով ինձ վերին աստիճանի նեղացնում էր. 12—13 օր առանց շորեր հանելու, կոշիկներով, ու հազար ու մի անյարմարութիւններ կրելուց, վագօնների մէջ մի քանի գիշերներ չարչարուելուց յետոյ՝ վերջին գիշերն էլ այդպէս անհանգիստ լինել, միանգամայն վրդովեցուցիչ էր:

Բայց ի՞նչ կարող էի անել, չարչարուելով համբերել: Ժամը ինն էր երբ մօտս մտան մի քանի պարոններ. արդէն լսած էին, որ հայ քահանան եկել է: Պ. Կամսար Տէր Գալստեանցը մի պատուաւոր երիտասարդ, ինձ իր մօտ հրաւիրեց և մինչև Իրկուտակից մեկնելու օրը (մնացի 15 օր.) հիւրասիրուեցայ յարգելի կնոջից և իրանից. շնորհակալութիւն: Ճանապարհի երկարութիւնից յիրաւի չափազանց յոգնած էի, թէպէտև շատ էլ անսովորներից չէի. բայց և այնպէս որոշեցի երկու օր հանգստանալ, բաղնիս գնալ, մաքրուել ու ապա երրորդ օրը ներկայանալ պ. նահանգապետին: Այդպէս էլ եղաւ. պ. նահանգապետն*) իմ այցետուօը

*) Օր առաջ պ. նահանգապետին իմ մասին Աստրախանի հայոց կօնսիստորիան իմաց էր տուել:



236-93

սպասաւորի ձեռքով ընդունելուց յետոյ՝
ինձ ներս հրաւիրեց. սիրալիր ընդունելու-
թիւն, համեստ վարմունք, ակամայ ստի-
պում է խուստովանուիլ, որ օտարը հայ հո-
գեւորականութեան աւելի պատկառանքով է
վերաբերում: Ձեական թղթերի ընթեր-
ցումից յետոյ՝ ինձ վկայագիր տուին Աղէսա-
նդրեան կենդրոնական բանտը ազատ մուտք
ունենալու համար: Մի գրութիւն էլ գիւ-
ղական տանուտէրին, որպէս զի վերջինս
օրէնքով նախատեսնուած միջոցները ինձ
չըզլանայ ցոյց տալուց:

Դարձեալ ճանապարհ գնալ, այն էլ
առաջին անգամ անծանօթ և անմարդաբնակ
ու երկիւղալի տեղերով. դորա համար լաւ
համարեցի իմ հետ ընկերացնել ծերունի
Խաչատուրին, որի հետ ծանօթացել էինք
գնացքում, և որը գնալու էր Խարբին. բայց
տեսնելով իմ խեղճ գրութիւնը և մանա-
ւանդ ցանկութիւն ունենալով բանտար-
կեալներին տեսնել, կամաւոր, իւր ծախքով
ընկերացաւ:

Սպասում ենք գնացքի մեկնելուն.
տոմսակներ վերցրել ենք, բայց դեռ կէս
ժամ կայ. կայարանում կեանքը վաղուց է
եռում. հարիւրաւոր ճանապարհորդներին

չատերը գնացքին են սպասում, շատերը
չոգենաւի, որը սպասում է Բայկալ *) լճի
վերայ. կայարանը լճին է կըպած: Գնացքը
մեկնեց. մենք կրկին յետ ենք դալիս. իջանք
երկրորդ կայարանը «Ուսսոյիան», որտեղից
չարունակելու ենք մեր ճանապարհը դէպի
Աղէքսանդրեան կենդրոնական տաժանա-
կիրների բանտը **): Պ. Խաչատուրի հետ
յարմար դատեցենք կայարանից մինչև հա-
մանուն գիւղը «Ուսսոյիա» սահնակ վարձելու
Բարեբաղդաբար գիւղը կայարանից միայն
մի քանի վերստ էր հեռու. և արդէն ժամն
էլ չորսն էր, գիւղացի կառապանը հարցե-
րով իր համար պարզեց, որ ես քահանայ եմ

*) Բայկալ լիճը կամ Սուրբ ծովը՝ յայնկոյս
Բայկալի և Իրկուտսկի սահման բաժանողն է:
Բայկալով վերջանում է Իրկուտսկ նահանգի սահ-
մանը: Բայկալի լայնութիւնը 50—80 վ.-ից աւելի
է. իսկ երկարութիւնը 600 վ.: Ընդհանրապէս
խորութիւնը ինչպէս ենթադրում են 700 ֆուտ
է, իսկ ամենախոր տեղը կը հասնի 7000-ի:
Բայկալ է թափուում Վերին Անգարան, Բար-
կուչին և Սելէնկա, իսկ սկիզբն է առնում Ներքին
Անգարան:

**) Բանտի ընդարձակ նկարագրութիւնը
կարգաւ մեր յօդուածը «Մշակ» լրագրի 1902 թ.
հոկտեմբերի համարներից մէկում:

և գնում եմ բանտարկեալներին հաղորդելու. դորա համար ինքը սկսեց ճանապարհներ ցոյց տալ և ուղիղ գիւղական տանուտէրի դռան առջև սահնակը կանգնեցրեց ու մեզ առաջնորդեց «նաչալնիկի», գիւղի կառավարչի առանձնատենեակը: Ծանօթացայ, Իսկոյն դէպքից օգտուելով՝ ցոյց տուի պնահանդապետի հրամանը, որի կարգալուց յետոյ նոյնքան համեստութեամբ ու քաղաքավարութեամբ սկսեց ինձ բացատրել ու համոզել, թէ «օրը տարածամ է, ճանապարհը երկիւղալի և մանաւանդ գիշերով, սաստիկ ցրտով պէտք է անցնել ամայի անտառների միջով, խորհուրդ տուեց և մինչև անգամ ստիպեց, որ մնանք՝ գիշերենք»:

Յայտնելով իմ խորին շնորհակալութիւնը, ձերուկ Խաչատուրի հետ ցտեսութիւն ասինք ու դուրս եկանք. մեզ ծառան տարաւ գիւղի կառավարչի տրամադրութեան տակ եղած խրճիթը—տաք, փոքր ու մաքուր. Երանի թէ մեր հայ գիւղացիներն էլ այդպէս շինէին իրանց խրճիթները: Փոքրիկ երկու երեք սենեակներ, մեծ վառարանը—կամ լաւ է անուանել փուռը տան մէջ յարմարացրած, որը թէ գիւղացու սենեակները տաք կը պահէ, թէ կերակուրներ կը

պատրաստէ և թէ մեծ խնայողութիւն անելուց դատ՝ բոլորովին ծխից կաղատէ: Այն ինչ մեր խեղճ գիւղացին ձմեռ, դարուն, աշուն ծխի մէջ է խեղդուում: Այո, ուստի գիւղացին հայ ռանչպարից շատ բարձր է. իր արիաջան կինը բառի բուն նշանակութեամբ տան սիւնն է: Իսկոյն մեզ համար բերին ինքնաեռ, դորա հետ էլ մի քանի ձու, կաթ և սև հաց: Ընթրիքը վերջացնելուց յետոյ պատրաստուեցանք քնելու: Ես փաթաթութուեցայ պ. Ղաղարեաններից վերցրած հաստ մուշտակով, պ. Խ-ն էլ իր վերարկուով. ապա մէջքը վառարանին դէմ տալով իրար «գիշեր բարի» ասեցինք: Այո, շատ հանգիտ քնանք. յոգնած, մրսածիսկոյն քուն գնացինք. աչքերս բաց արինք և ինչ, արդէն ժամը 8-ն է և երեք ձիանի սահնակը իր կառապանով մեզ էր սպասում:

Մենք պատրաստուելու ոչինչ չունէինք մի կապոց՝ որը արդէն պատրաստ էր՝ ճանապարհ ընկանք: Դեռ նոր էինք գիւղի սահմանից դուրս եկել, արդէն սկսուեց անտառը, որի մի կողմում գիւղից ոչ շատ հեռու գործում էր լուցկլի գործարանը:

Սահնակը մերթ ուղիղ, մերթ ծուռ ու մուռ կամ դէս ու դէն ընկնելով սա-

հում է. ոչ թռչնի, ոչ գազանի, ոչ վայրենի կենդանիների և ոչ էլ մարդկանց հոտն ու հեաքն էր երևում. ամեն կողմ տիրում էր կատարեալ մեռելային լուսթիւն. միայն սուրհանդակի սահնակի զանգակի ձայնն էր զողանջում և կարծես մեզ հոգի ու սիրտ էր տալիս: Յատուկ հիւսիսային երկրներին, կատաղի քամին էլ բորենու նման բերանը բաց արած անգաղար հն փչում է ու փչում ու սպիտակ ծառերից ձիւնի քուլաները փաթիլ-փաթիլ թափ տալով ճանապարհորդներին ալրակոլոր էր դարձնում, հէնց ասես ալրի շաւմարանից նոր դուրս գալած լինիս: Այն, ցուրտ է և չը տեսնուած ցուրտ, մրսում ենք ու կուչ եկած շարունակում մեր ճանապարհը: Մի քանի վերստ գնալուց յետոյ կառապանը ձիւրը կանգնեցրեց մի փոքրիկ գետակի-վտակի ափին. սա Անգարայի ամենափոքր ճիւղն է եղել. կառապանի գոռում-գոչումը, զիլ ու սուր ձայնը հազիւ հազ լսելի եղաւ միւս ափում խրճիթի մէջ եղած պահապաններին. և ո՞վ գիտէ գուցէ պատահմամբ փոքրիկ լուսամուտից նկատեցին, որ դուրս եկան. մեզ պէտք է այն կողմը անցկացնեն. այս էլ մի ուրիշ պատիժ. քսան ընթացի չափ սառած

վայտի նման սպասելուց յետոյ՝ թիափալելով մեզ մտեցրին մի լաստ

Երեք չորս հոգի մեծ եռանդով քանդեցին ձիւրը, սահնակը ձեռներով տեղաւորեցրին լաստի վերայ, քաշեցին և ձիւրին. մենք էլ խօսի լինքներս մի տեղ կուչ եկանք ջուրն ընկած հաւերի նման. տասն արշին լայնութիւն ունեցող վտակը հազիւ կէս ժամում անցանք օրօրուելով: Կրկին ձիւրը լծելուց յետոյ շարունակեցինք մեր ճանապարհը: Յրտի զօռից կարծես թէ ամենքս էլ աշխուժի էինք ուզում գալ, բայց իզուր: Դարձեալ անտառներ, նորից փոքրիկ բլրակներ ու մանրիկ ձորակներ, որոնց միջից մեր սահնակը հպարտ, փորձուած ու սովոր կառապանի ձեռքի տակ իր ձիւրով թռչում էր: Փառք քեզ բնութիւն, որ քո մէջ բովանդակում ես ամեն բան ու խղճալով անսովոր խղճուկ ճանապարհորդներին շտապեցար քո գոյութիւնը ցոյց տալ, դու զօրեղ ես ու վեհ, անհասկանալի, անխմանալի, որ նոյն ընթացին վհատածներին ուղարկեցիր քո կենդանացուցիչ արևը:

— Այս ի՞նչ հրաշալի պատկերներ ու տեսարաններ բացուեցան մեր առաջ պ. ծերուկ Խաչատուր, որը զթի տակին մեզմիկ

մրմնջում էր. «Աստուծու ողորմութեան մեռ-
նիմ, նա իր ստեղծածին չի կորցնի, միայն
մենք չենք ուզում հաւատար»:

Չմեռն էլ իր տեսարաններով կախար-
դիչ է. յերաւի կարծես արևի ճառագայթ-
ների տակ անշունչ առարկաներն էլ սկսեցին
բնութիւնը փառաբանել ու օրհնել, նոյն իսկ
քրտնած կենդանիներն էլ մեծ ցանկու-
թեամբ էին քաշում սահնակը. իսկ մեր
չարքաշ կառապանը մօրթեայ մաշուած
ձեռնոցները մի կողմ ձգելով՝ իր հոտած
ծխախոտից գլանակ էր ծխում. Ծառեր,
սարեր, անտառներ, ձորեր ու արև կարծես
ուրախութիւններից իրար էին ողջունում,
որպէս բնութեանմէջ ապրող անբաժանելի,
ու մէկը միւսին լրացնող ու ներգաշնակու-
թիւն պահող ընկերներ:

Կամաց կամաց կենդանութիւն է աչքի
ընկնում. ասել է, գիւղին ենք մօտեցել:

«Տէր հայր, այդ է Աղէքսանդրեան գիւղը
— տեսնո՞ւմ էք, մտրակով ցոյց է աւլիս մեր
կառապանը»: Յիրաւի արդէն երևում են
տախտակից շինած խրճիթներ, լաւ քարէ
տներ, լայն բակերով ու պարտէզներով.
Փողոցները կանոնաւոր և ուղիղ. մեր աչքի
առաջն է և շուկան իր մի քանի աննախան-

ձելի մանրավաճառների խանութներով. ահա
և գիւղական եկեղեցին, ծխական դպրոցը
կից եկեղեցուն. ահա և նամակատունը.
10—15 րոպէի չափ մեր սահնակը դնում
էր երկու ձորի միջով: Հեռուից ձորի միջում,
ըրջապատած սարերով երևում է մի սրբա-
տաշ հոյակապ եկեղեցի իր մի քանի բարձր
գմբէթներով ու մի քանի երկյարկանի շի-
նութիւններ. սա արդէն բանտի եկեղեցին
է իր հիւանդանոցով, հիւրատնով, ընդար-
ձակ բանտով, կառավարչական տներով ու
հաստատութիւններով. Սահնակը կանգնեց
եկեղեցու հէնց դէմ ու դէմ, աղիւսեայ
շինած մի ընդարձակ շինութեան առաջ. Ին-
չո՞ւ կանգնեցանք հարցրի կառապանին.
«— Այստեղ էք իջնելու, Տէր հայր»: Իսկոյն
դուրս եկան երկու սպասուոր, քաղաքա-
վարի ողջունելուց յետոյ ինձ վայր իջացրին,
կալիդօրի միջով առաջնորդեցին մի գեղեցիկ,
փոքրիկ, լաւ ու մաքուր կահաւորուած տաք
սենեակ ծերուկ Խաչատուրի հետ. Կապոցը
ներս բերելուց յետոյ՝ վերջացրինք կառա-
պանի հաշիւը ու ապա սկսեցինք լուացու-
ել. մեզ համար դեռ առաւօտ էր, որովհե-
տե սովորականի համաձայն քնից զարթնե-
լիս լուացուած չէինք:

«Սա ինչ շինութիւն է», հարցրեց պ. Խաչատուրը մեր մօտ կանգնած ուսու ու լէհ սպասաւորներին, որոնք կարծես, թէ ուզում էին մի բան հարցնել, բայց միանգամից չէին վստահանում:

— Սա շինուած է յատուկ ձեզ պէս պաշտօնական և զինուորական անձանց համար ու կամաց կամաց վստահութիւն ստանալով ինձանից խնդրեցին անցադիր-գըլ-խազիր: «Ներեցէք», Տէր հայր, չը նայելով որ մենք արտօրականներ ենք՝ քաշուում էլ ենք ձեզպէսներից վկայադիր պահանջել, բայց կարգը այդպէս է»:

Իսկոյն յանձնեցինք պ. նահանգապետի թուղթը, որը տարան կառավարչի գրասենեակը: Վերադառնալիս ինձ յայտնեցին, որ գլխաւոր կառավարիչը այնտեղ չէ. բայց հիմայ օգնականը կը գայ:

Մի քանի րոպէից յետոյ մօտս եկաւ բանտի գլխաւոր կառավարչի ստորին ծառայողը և յայտնեց, «թէ պ. օգնականը կէս ժամից յետոյ կը գնայ բանտ և դուք էլ հրամէք այնտեղ»: Մինչ այս, մինչ այն մենք բաւական մաքրուել էինք, տաքացել և թէյի հետ էլ նախաճաշիկ արել. պ. օգնականը ինքն էր բարեհաճել մօտս գալ և մի քանի

րոպէ դէսից ու դէնից խօսելուց յետոյ՝ ինձ հրաւիրեց բանտ. հետս էր պ. Խաչատուրը:

Արդէն ինձանից առաջ կարգադրել էին, որ հայ բանտարկեալներին միասին հաւաքեն, որով հնարաւորութիւն տուած եղան ինձ ընդունելու: Մեզ շրջապատեցին բանտի ծառայողները, որոնք կարեկցաբար էին վերաբերուում. Նոյն րոպէին լացը՝ արտասուքի, տխրութիւնը՝ ուրախութեան հետ խառնուած, ազդեցին և շրջապատող ծառաներին: Ինձ հազիւ հազ զսպելով, սկսեցի հետները խօսել մօտ մի ժամ, որից յետոյ պ. օգնականը իր հետ առած՝ ինձ տարաւ բարձրացրեց վերի յարկը, ցոյց տուեց մի առ մի զանազան ազգութեանց բաժանմունքները, իւրաքանչիւր բաժանմունք մեզ պատկերացնում է մի ընդարձակ ու լայն դահլիճ. պատերի երկարութիւններով շինուած են թախտեր, իսկ մէջտեղը ազատ միջանցք. բանտարկեալները ննջարանը, սեղանատունը, առանձնասենեակը այդ դահլիճն է: Ընդհանրապէս գեղեցիկ, չոր, երկյարկանի լուսաւոր շինութիւն է բանտը, ինչպէս ասացինք ընդարձակ սենեակներից և մի երկայն ընդհանուր լուսաւոր կալիդօրից՝ որի ընդհանուր մուտքը միշտ էլ փակ է:

Բանտարկեալները դահլիճները կամ
ընդարձակ բաժանմունքներ այսպէս են տե-
ղաւորուած՝ պարսիկները, թուրքերը, սար-
տերը, մի խօսքով մահմետականները միա-
սին են ապրում. իսկ հայերը, ռուսները,
լէհերը, վրացիք միասին: Բայց ինչպէս երևում
է շատ սիրով ու համերաշխ: Այդ սենեակ-
ներէց մէկը յատկացրած էր դպրոցի*) ահ-
մար իր դպրոցական պարագաներով: Ման
ենք գալիս ամեն մի անկիւն տեսնելու. ինձ
ըրջապատած եմ տեսնում միշտ հայերով.
հանդիպող այլազգի անձանօթ բանտար-
կեալն էլ խօրին յարգանքով դուրս է տալիս:
Որովհետեւ բանտային քահանան բացակայ էր
և որովհետեւ հնարաւորութիւն չկար եկեղե-
ցու դուռը բանալ, ինչպէս շատ տեղերում
բաց են անում, դորա համար էլ հէնց այդ-

*) Ես եղել եմ պաշտօնով (քահանայ ժամա-
նակ) Յարիցինի, Սարատովի, Սամարի, Տամբովի
բանտերում. վերջինս մի հրաշալի շինութիւն է.
բոլոր բանտը լուսաւորուում է էլէքտրական լու-
սով. ամեն մի բանտի մօտ անպատճառ կայ դպրոց
և եկեղեցի. բանտերը ունին և դրադարաններ. ինձ
յաջողուելու էր Սարատովում հայերի բաժինն էլ
ունենալ. շատ աշխատեցայ, բայց դժբաղդարար
հիւանդութեանս պատճառով հեռացայ և գործը
մնաց կէս կատար:

տեղ էլ որոշուեց, որ դպրոցում երեկոյեան
ժամասացութիւն անենք, յետոյ խօստո-
վանուն և այլն: Պ. օգնականը հայ բան-
տարկեալներին և ինձ պատուած լինելու
համար, հրամայեց մինչև երեկոյ սեղանները,
նստարանները, դրատախտակները, աւելորդ
իրերը դուրս հանեն, լուան ու մաքրեն. և
այդպէս դպրոցում երեկոյեան ժամասա-
ցութիւն արինք պ. Խաչատուրի և իրանց
մէջ եղած տիրացուների օգնութեամբ: Միւս
առաւօտ կրկին ժամասացութիւն արինք,
խոստովանուածներին հաղորդեցի: Եկաւ և
մնաք բարովի սըրտաշարժ ժամը. բայց ի՞նչ-
պէս բաժանուէի, սրտածմլիկ էր այդ տեսա-
րանը, բանտարկեալները չէին ուզում փե-
շերս բաց թողնել, ամեն կողմից հարցեր
էին տալիս: Ստիպուած էի պ. օգնականից
կրկին ու կրկին ներողութիւն խնդրել, որ
իրան անհասկանալի լեզուով գուցէ ձանձ-
րութիւն ենք պատճառում:

— «Կաղաչեմ, Տէր հայր, մի նեղուիք»
Յետոյ շարունակեց. «ձիշտ է, անձանօթ
լեզուով էք խօսում, բայց հասկանալի է, որ ս.
Աւետարանի հողին, միտքն էք քարոզում,
յորդորում ու խրատում: Երէկ դուք խօ-
սեցիք, քարոզ տուիք. ես ուրախութեամբ

մինչև վերջը լսեցի. ինձ յետոյ թարգմա-
 նեցին. ես շատ դո՛հ մնացի. շատ և շատ
 ցանկալի էր, որ դուք մեզ մօտ ապրէիք,
 որով հնարաւորութիւն կունենայիք միշտ
 խրատել, որպէս մի բարի և գթառատ հայր.
 չէ որ մեր բոլորի ցանկութիւնն ու նըպա-
 տակն է նոցա ուղղել: Ի հարկէ տէրութեան
 և մարդկութեան շահերը, կենցաղավարու-
 թիւնը մեզանից պահանջում են, որ աշ-
 խատենք սոցա շուտ ուղղել. դուք ինքներգ-
 արդէն տեսաք, որ ունինք դպրոց, եկե-
 ղեցի, թատրոն, գրադարան, երաժշտական
 խումբ և մի զարմանաք, որ այդ պարոննե-
 րից են կազմուած, և այստեղ բոլորն էլ
 արքսորուածներ են»:

Բանտի մաքրութիւնը օրինակելի էր,
 բոլոր բաժանմունքների դռները բաց. ամեն
 մի բաժանմունքի հետ յարաբերութիւն
 պահելը միշտ ազատ: Դիտմամբ են ազատ
 թողնում, որ անկարգութիւնները յաճախ
 չը կրկնուին և սա մի բարի կապ է բան-
 տարկեալների ու կառավարիչների մէջ: Սա
 մի փոխադարձ սիրոյ և յարգանքի նշան
 է, որի շնորհիւ բանտարկեալները կառա-
 վարիչների կարգերն ու հրամանները առանց
 այլևայլութեան յանձն են առնում կատա-

րելու. ուրիշ խօսքով միայն այս կերպով
 բանտային կեանքը խաղաղ է անցնում:
 Միայն մի բան շատ վատ տպաւորութիւն է
 թողնում մարդու վերայ. գեղեցիկ հիւրա-
 տան սենեակների և նոյն իսկ թատրոնի
 դահլիճի պատերից կախ են արած արքսոր-
 ուածների խմբովին նկարուած լուսանկար-
 ները գլուխները գերծած, ձեռները և ոտ-
 ները շղթայուած. այո՛, եկուորի վերայ շատ
 վատ է ազդում: Համանուն դիւղը հիմնել
 են հէնց իրանք ազատուած արքսորուած-
 ները, որը գնալով ընդարձակուում է:

Հետևեալ օրը յայտնելով իմ խորին
 շնորհակալութիւնը, վերագարձանք պ. Խա-
 չատուրի հետ Իրկուտսկ, որին իբրև Սիբի-
 րիայի կենդրոնական նահանգական քաղաք,
 արժէ մի թուուցիկ հայեացք ձգել:

Քաղաքը մեծ է և բռնում է ընդարձակ
 տարածութիւն. տեղ-տեղ դաշտավայրի՝
 տեղ-տեղ սարերի լանջերին ընկած. ունի
 40,000 բնակիչ, բաղկացած զանազան ազ-
 գութիւններից: Վերջին տարիներում ահա-
 գին թուով Ռուսաստանի խորքերից ուս
 ժողովուրդ է գաղթում, որի համար գանձա-
 րանից մեծ գումար է բաց թողնուում իւ-
 րաբանչիւր տարի, և որի գումարը հարիւր

հազարների է հասնում: Քաղաքը ունի գեղեցիկ շինութիւններ, ճարտարապետական ճաշակով կառուցուած գեղեցիկ եկեղեցիներ մանաւանդ գրանիտի քարից շինուած հոյակապ գմբէթաձև Մայր եկեղեցին, որից ոչ հեռու յաղթական դռան մօտ կանգնեցրած է Աղէքսանդր Գ.-ի արձանը ի նշան Իրկուտակ մտնելուն. կան բաւական կրթական հաստատութիւններ՝ նոյն իսկ օրիորդաց համար ինստիտուտ. առ հասարակ բոլոր շինութիւնները, մանաւանդ վարչական տները երկ կամ եռայարկ են, կառուցուած աղււսից. բայց մեծամասնութիւնը փայտեայ տներ են: Նշանաւոր է Իրկուտակի բաղանիսը, որ ամեն մի ճանապարհորդի ուշադրութիւնն է գրաւում. ներսը սպիտակ մարմառից շինած, մաքուր ու անմահական ջուր, վաննաներով, տուչերով: Իսկ հանուելու ու հագնուելու տեղը առանձին վարագոյններով է բաժանուում. ունի առանձին զարդարուած դահլիճ. սեղաների վերայ ամեն տեսակ լրագրներով: Որպէս զի յաճախորդները չը ձանձրանան, կամ հանգստանան լուացուելուց յետոյ. եւ այդ ամենը արժէ միայն 30 կոպէկ:

Փողոցները լայն, կանոնաւոր, տեղ-տեղ

երկու կողմից տախտակներով սալայատակած անցորդների համար: Աչքի են ընկնում գլխաւոր, մեծ ու նշանաւոր փողոցները, գիշերները լուսաւորուում են էլէքտրական լուսով:

Անգարան, որ իր (ներքին մասը) սկիզբն է առնում Բայկալ լճից, քաղաքը երկու մասի է բաժանում. հէնց մօտոյն էլ անցնում է երկաթուղու գիծը գետի հոսանքին զուգընթաց գծով: Երկու քաղաքամասերը միանում են իրար հետ փայտեայ շարժական կամուրջով՝ շինուած կամ ամրացրած են խոշոր լաստերի վերայ:

Չմեռը գետը սառչում է. կամուրջը վերցնում են: Կառապանները ամեն անգամ կամուրջից անց ու դարձ անելիս՝ վճարում են որոշ տուրք, կամուրջի կարկատելու, վերանորոգութեան ծախքերի համար. կամուրջի երկու ծայրերում շինուած են պահնոցներ, ուր գիշեր և ցերեկ պահապանները հսկում են ու փող ստանում, տալով անցնելու տոմս, որ միւս կողմից ազատ մուտք ունենայ. այդպէս և հակառակ կողմից եկողների համար. հետիոտները ոչինչ չեն վճարում:

Անգարան իր ջրի պարզութեամբ, քաղցր

համով չեմ կարծում, որ ամեն ճանապարհորդի վերայ ուշադրութիւն չհրաւիրէ. ձկների լող տալը մինչև անգամ պարզ աչքով տեսնուում է, չնայելով որ բաւականին խոր է: Գետի վերայ կատարուում է փոքրիկ նաւադնացութիւն:

Երևանեան նահանգի՝ օրինակ Ապարանի մաքուր ու առողջարար ջրերը, Խրիմի՝ Բաղչիսարայի սառնորակ աղբիւրներն ու վտակները, Բեսարաբիայի նահանգի, Անդրկասպեան երկրի, Վոլգայի շրջակայ քաղաքների և ոչ մէկի ջուրը սորա հետ չի կարելի համեմատել: Ազգաբնակչութիւնը օգտուում է այս անարատ, մաքուր, առողջարար ջրից, որը ամառն էլ նոյնքան պարզ է. ամեն ճանապարհորդ վերադարձին գոնէ մի շիշ ջուր կը վերցնէ հետը: Գետ ջրանցք չկայ: Բնիկ ժողովրդի հետքը քիչ է երեւում. տիրապետող տարրը ռուսներն են. ապա հրէաները, կազանի կամ Ղազանի թաթարները, մանր մուկը ազգերից աչքի են ընկնում վրացիներ, հայեր, յոյներ, գերմանացիներ, լէհացիներ թէև շատ անշան, բայց ունին եկեղեցի:

Ռուսները պարապում են կամ իրանց մէջ են կենդրոնացրել ապակիի, կաշու, եր-

կաթի և նոյնանման իրեղէնների վաճառականութիւնը, ինչպէս և մանուֆակտուրան՝ շորեղէնը:

Հրէաները—ընդհանրապէս ոսկու, արծաթի, ժամացոյցի, մասամբ և պատրաստի շորերի առևտուրը. իսկ թաթարները բազմապիսի և բազմադոյն կենդանիների մորթիներով, պատրաստի թանգաքին մուշտակներով, գորգերով, կապերտներով: Հայերը՝ մեզ այստեղ յիշեցնում են Արշակաւանի պատմութիւնը. սր գիւղից, սր երկրի ծայրից կամենում էք, կարող էք այստեղ հայեր գտնել: Հարուստ հայ վաճառականներ չկան և չէր էլ կարող լինել. և եթէ այսօր մի օրեիցէ կերպով ապրում են, այդ պէտք է վերագրել իրանց ճարպիկութեանը. պարապում են օղի, գինի վաճառելով, ինչպէս և վրացիք. ունին փոքրիկ բաղկալի խանութներ. վրացիք առ հասարակ պահում են հիւրանոցներ, ճաշարաններ և այլն:

Կեանքը շատ էլ թանգ չէ, և եթէ հետզհետէ մթերքների գները զգալի կերպով բարձրանում են՝ դորա պատճառը նախ արտահանութիւնն է, արտահանում են մեծ քանակութեամբ իւղ, միս և շն: Երկրորդ Ռուսաստանի պարբերական դաղթականու-

Թիւնը, զգալի կերպով բնակիչների թիւը շատացնում է և ապրուստի կարիքների գները քրոթեան պատճառով բարձրացնում:

Մասնաւորելով մեր խօսքը հայերի մասին՝ կասենք 50—80 հոգի կը լինին. կամաւոր եկուորների թիւը շատ քիչ է. մեծ մասամբ արտօրականներ են, որոնք իրանց նշանակուած ժամանակը վերջացնելուց յետոյ 12, 20 տարուայ ընթացքում՝ բնականաբար ընտելանալով կլիմային, նիստ ու կացին, տեղի հանգամանքներին և մանաւանդ երիտասարդական ուժերը կորցրած լինելով և, ո՞վ գիտէ մի ուսու կնոջ հետ էլ կապուած, այլ ևս աւելորդ են համարում վերադառնալ իրենց հայրենիք: Ընտանիքներով շատ քիչ հայեր կան, նոյն իսկ մատներով կարելի է համարել. բնական էր, որ տարիների ընթացքում հայ արտօրեալները այլասեռուէին առանց կանանց, առանց ընտանեկան կեանքի: Այդ երևում է և նորանից, որ տարի էր անցել և այդ մի տարում մէկ մկրտութիւն կար անելու:


Հայերը խեղճ են. այս մի բուռն, անմխիթար մարդիկ կամենում են իրանց համար եկեղեցի ունենալ իրանց մշտական

քահանայով. այդ տեսակէտից Սիբիրիայի հայերը երախտապարտ են հանգուցեալ հեռատես, խոշոր հողեորական մարդուն— իրանց թեմական առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին, որը տքնում էր ամեն տեսակ, որպէս զի այնտեղի հայերը հողեպէս մխիթարուած լինին: Գնալ 16 հոգու հաղորդելու՝ առաջնորդի կամ թեմի վերայ նստել է մօտ 150 թ. և այդ է պատճառը, որ այսօր այդպիսի ծախքերից ազատ լինելու համար և մշտական քահանայից զուրկ չը լինելու պատճառով, այնտեղի հայերը պահում են իրանցքահանան, որը գնում է մինչև Սախալին: Մինչև անգամ նորքա քաղաքից մօտ 500 քառակուսի սաժէն հող պահանջեցին եկեղեցու շինութեան համար. խնդիրը պ. Աղէքսանդր Խոսրովեանի շնորհիւ և ժողովի որոշման համաձայն ես ներկայացրի պ. քաղաքագլխին: Նա խոստացաւ անպատճառ հայերին օգնել, բայց մինչև այսօր գոնէ լրագրութեան միջոցով չը յայտնուեցաւ, թէ գործը ի՞նչ դրութեան մէջ է:

Բայկալ լճի ափում 70 վերստ հեռու՝ կայ կուլտուգ գիւղը, այնտեղ ևս կան հայեր. դէպքից օգտուելով ինձ տարան մի

մկրտութիւն կատարելու. և ինչ. խեղճի երկու որդին մկրտել էր ուսւ քահանան, իսկ երրորդը հայ. ահա քեզ, խղճալի դրութիւն: Այդ թուականին էր, որ Շուրջ-Բայկալեան երկաթուղու գիծն էին պատրաստում, որը արդէն պատրաստ է դէպի Մանժուրա զնալու համար:

Մենք իր ժամանակին Սրբազան առաջնորդին մեր համեստ կարծիքը յայտնեցինք այսպէս. այդտեղի համար հարկաւոր է ոչ թէ մի քահանայ, այլ երկու գիտնական, լեզուներ գիտցող, ուսեալ վարդապետ-առաքեալներ. մինը վեց ամիս ժամանակով հոգուելու է Իրկուտսկի և շրջակայ հայերին մինչև Պետրոպաւլովսկ. իսկ միւսը մինչի Սախալին, Ճապոնիա և այսպէս փոփոխական. եկեղեցին ու քահանան որոշ չափով այն տեղերի հայերի համար միակ մխիթարութիւնը կը լինի և կապը իրենց ազգի հետ*):



*) Արտատպելու կամ օգտուելու իրունքը վերապահուած է:

ԼՈՅՍ ՏԵՍՍ.Ի ԵՒ ՎԱՃՍՈՒՌՈՒՄ Է

ՈՒՂԵՑՈՅՑ

Ուսուցիչների, տնային վարժուհիների, դաստիարակչուհիների եւ ծնողների համար:

Հայոց լեզուի աւանդման բնական ձեւը գործնական դասերով Վրացախօս, Տանկախօս եւ Չերքեզախօս դպրոցներում եւ ընտանիքներում, լիակատար բացատրութիւններով.

Կ ա լ

Նորագոյն բնական մեթոդով օտար լեզուի աւանդույր այլազգի դպրոցներում եւ ընտանիքներում. այսպէս ուսուցիչներ մեր դպրոցներում եւ այլն:

Կազմող

ԵՐԵՄԻԱ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՂԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՆԻՔ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան



NL0423405

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Ռ Ւ Մ Ե Ն

Ո Ւ Ղ Ե Յ Ո Յ Յ

1. Հայ. լիզ. աւանդ բնակոն ձեր. Վրաց. Տաճ և
Չերքեզախոս զպրոցներում գոյ ծ' դասերով
գինն է 30 կող.
2. Ի՞նչպէս են կազմում գրեքը, սահաւա-
թիւ, Տփլիս, գրով. «Гуттенбергъ».
գինն է 25 կ.

ԳՐԳԵՐ ՊԱՀԱՆՁՈՂՆԵՐԻՆ

Հ ա ո ղ է ն ե ռ .

1. Սվ. Эчмиад (Эрив. губ.) Архимандр. Теремин.
2. Царницынъ и Волгъ. М. Д. Мискарову.
3. Евнаторія (Тавр. губ.) Егору Кушнареву.
4. Аккерманъ (Бес. губ.) Анаидъ Теръ-Ере-
мианъ Степаньянцъ.
5. Владикавказъ Свящ. Теръ-Акону Сарикянцу.
6. Армавиръ (Куб. об.) Андреасу Х. Акон-
джаянцу.
7. Эриванъ книж. маг. Ованесянцъ